# ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

04-17

Ք.Երևան «17» «02» 2017թ.

Հիմք ընդունելով 2004 թվականի նոյեմբերի 26-ին տրված անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման վկայականը /18.06.2014 թվականին կատարած լրացմանք/, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ պատվիրատու), ի դեմս տնօրենի ժ/պ Գ. Ներսիսյանի, որը գործում է պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Ստեփանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին, այսուհետ՝ կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրի գործողության ընթացքում կատարողը պատվիրատուին է մատուցելու Երևան քաղաքի Արմենակյան 129 հասցեի շենքի (այսուհետ՝ շենք), 2-րդ հարկի պատվիրատուի կողմից օգտագործվող 280 քառ. մետր ընդհանուր օգտագործման տարածքի սպասարկման մակերեսով (այսուհետ՝ տարածք) սույն պայմանագրի 1.2-րդ կետում թվարկված սպասարկման ծառայությունները (այսուհետ՝ ծառայություններ), իսկ պատվիրատուն կատարողին վճարելու է դրանց դիմաց:

1.2. Կատարողը պատվիրատուին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

ա. ջրամատակարարման ու ջրահեռացման (կոյուղի) համակարգերի անխափան աշխատանքի ապահովում,

բ. էլեկտրամատակարարման համակարգի անխափան աշխատանքի ապահովում,

գ. վերելակների բնականոն աշխատանքի ապահովում (դրանց առկայության դեպքում),

դ. սանիտարական հանգույցների անխափան աշխատանքի ապահովում,

ե. անհրաժեշտ լուսավորության ապահովում,

զ. աղբահանության կազմակերպում,

է. պահակային ծառայության կազմակերպում:

## II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. ծառայությունների դիմաց սույն պայմանագրով սահմանված ամսական սպասարկման վճարը կատարողին վճարել մինչև հաջորդ ամսվա 10-ը՝ անկանխիկ վճարումների դեպքում վճարման հանձնարարագրի պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելով կատարողին.

2.1.2. սեփական միջոցներով վերականգնել պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքին իր կողմից պատճառված վնասը՝ կատարողի հետ գրավոր համաձայնեցված ժամկետներում.

2.1.3. շենքում (ներառյալ տարածքում) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հակահրդեհային անվտանգության կանոնների պահանջները,

2.1.4. սույն պայմանագրով նախատեսված ծավալով ծառայության մատուցման անհնարինության դեպքում, որը ծագել է պատվիրատուի մեղքով, ծառայությունների արժեքը վճարել ամբողջությամբ,

2.1.5. կատարողին անհապաղ հայտնել շենքի սարքավորումների անկանոն աշխատանքի (անսարքություններ, վթարներ և այլն), շենքի ընդհանուր օգտագործման տարածքներից բնականոն օգտվելուն խոչընդոտող բոլոր տեսակի այլ հանգամանքների ու պատահարների, ինչպես նաև պատվիրատուի կողմից հայտնաբերված շենքի վնասվածքների մասին:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. կատարողից պահանջելու ծառայությունների պատշաճ կարգով և սահմանված ժամկետներում մատուցում,

2.2.2. կատարողին ներկայացնելու առաջարկություններ ծառայությունների մատուցման գործընթացի կատարելագործման ու բարելավման վերաբերյալ,

2.2.3. կատարողից պահանջելու հատուցել վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով պատվիրատուին (ներառյալ տարածքում տեղակայված նրա գույքին) պատճառված վնասները,

2.2.4. սեփական միջոցների հաշվին իրականացնելու տարածքի բարելավումը (ներառյալ հիմնանորոգումն ու վերանորոգումը)՝ կատարողի հետ նախապես համաձայնեցնելով դրա կատարման եղանակն ու ժամկետը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ ողջամիտ ժամկետներում ապահովելով շենքում տեղի ունեցած վթարների և անսարքությունների վերացումը,

2.3.2. սահմանված ժամկետներում կատարել շենքի պահպանմանը նպատակաուղղված աշխատանքներն ու առանձին միջոցառումները (ներառյալ շենքի շահագործման համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների տեղադրում, վերանորոգում, հիմնանորոգում, դրանք արդիականներով փոխարինում և այլն),

2.3.3. սահմանված ժամկետներում կատարել շենքի տանիքի, նկուղների, աստիճանների ու ընդհանուր օգտագործման այլ տարածքների ընթացիկ վերանորոգման ու հիմնանորոգման աշխատանքները:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. պատվիրատուի կողմից պայմանագրով սահմանված գումարների վճարումներն ավելի քան 30 օրացուցային օր ուշացնելու դեպքում դիմելու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ կատարողի հետ կնքված ընդհանուր օգտագործման տարածքի սպասարկման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջով,

2.4.2. ցանկացած ժամանակ, առանց պատվիրատուի կանոնադրական գործունեության անմիջական միջամտության, ստուգելու վերջինիս կողմից տարածքից և շենքի ընդհանուր օգտագործման տարածքներից, ճարտարագիտական ցանցերից, սարքերից ու սարքավորումներից օգտվելու պայմանները,

2.4.3. իր կանոնադրական գործունեության կամ պայմանագրով նախատեսված և տարածքի հետ որևէ ձևով կապված գործողությունների կատարման ընթացքում պահանջելու պատվիրատուի օժանդակությունը՝ վերջինիս իրավասությանը վերապահված հարցերի լուծման համար:

## III. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Պայմանագրի պահանջները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Այդ պահանջները չկատարելու, անպատշաճ կամ ժամկետանց կատարելու, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքին կամ մյուս կողմին վնաս պատճառելու կամ հավանական եկամուտներից զրկելու դեպքում, խախտող կողմը կրում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն:

3.2. Սույն պայմանագրով սահմանված սպասարկման վճարի մուծումն ուշացնելու դեպքում պատվիրատուն կատարողին վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.15 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

## IV. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2016 թվականի մարտի 1 -ի N 21- Ն հրամանով պետական սեփականություն հանդիսացող տարածքների օգտագործմանը հանձնված սպասարկման ծառայությունների վճարի ամսական (բազային) դրույքաչափի և նույն հրամանի 2-րդ կետով հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով կիրառվող զեղչի արդյունքում յուրաքանչյուր 1 քառ. մետրի համար սահմանված է 493 (չորս հարյուր ինըսուներեք) դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկ):

4.2. Պայմանագրի 4.1.-ին կետին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով տարածքի մակերեսը, պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման դիմաց կատարողին վճարվող

ամսական գումարը կազմում է 138 040 (մեկ հարյուր եռեսուն հազար քառասուն) դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

## V. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2. Եթե պայմանագրի գործողության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օրացուցային օր առաջ կողմերից որևէ մեկը մյուս կողմին գրավոր չի հայտնել պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հետևանքով այն լուծելու իր ցանկությունը, ապա պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված՝ բայց ոչ ավելի, քան պետական գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագրի գործողության ժամկետը:

5.3. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով և կարգով:

## VI. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## VII. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհամաձայնության դեպքում՝ դատական կարգով:

## VIII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.1. Սույն պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի անվավերության դեպքում սույն պայմանագիրը լուծվում է:

## IX. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

## X. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝

(կազմակերպություն) ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝

273.180.05667, գրանցման ամսաթիվը՝ «04» «02» 2011թ., գրանցման վկայականի համար՝ 002773, տրված «04» «02» 2011թ., ՀՎՀՀ՝ 01573524, իրավաբանական անձի գտնվելու վայրը՝ ք.Երևան Արմենակյան 129, գործունեության իրականացման վայրը՝ ք.Երևան Արմենակյան 129, հաշվարկային հաշիվ N 900011064087 «ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն»-ում, հեռախոս՝ (010) 65-16-31, (010) 65-16-41:

Կատարող՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ N 222.210.00408, գրանցման ամսաթիվը 08.10.2004 թ., վկայական N 03Ա085321, տրված 23.09.2009 թ., ՀՎՀՀ՝ 02562123 իրավաբանական և գործունեության հասցեն՝ Երևան, Զաքիյան 10, հաշվարկային հաշիվ N 1570003302070100 «Ամերիաբանկ ՓԲԸ-ում, հեռախոս՝ 56-32-46:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրենի ժ/պ

**Գ. Ներսիսյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

« «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն

**Ս. Ստեփանյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

## 17.02.2017 թվականին կնքված թիվ «04-17» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «09» «03» 2017թ.

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրենի ժ/պ Գ. Ներսիսյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Ստեփանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ և հիմք ընդունելով ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև 2017 թվականի փետրվարի 17-ին կնքված թիվ «04-17» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրի 4.2 կետում նշված «եռեսուն» բառը փոխարինել «եռեսունութ» բառով:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից,

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժան մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ** | **«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Արմենակյան 129 | Երևան, Զաքիյան 10 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011064087 | ՀՀ 1570003302070100 |
| ՀՎՀՀ 01573524 | ՀՎՀՀ 02562123 |
| տնօրենի ժ/պ | գլխավոր տնօրեն |
| **Գ.Ներսիսյան** | **Ս. Ստեփանյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

## 17.02.2017 թվականին կնքված թիվ «04-17» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» «04» 2017թ.

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրենի ժ/պ Գ. Ներսիսյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Ստեփանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ և հիմք ընդունելով ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև 2017 թվականի փետրվարի 17-ին կնքված թիվ «04-17» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

Պայմանագրի 2.1.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ծառայությունների դիմաց սույն պայմանագրով սահմանված ամսական սպասարկման վճարը կատարողին վճարել մինչև հաջորդ ամսվա 10-ը, բացառությամբ դեկտեմբեր ամսվա, որի համար վճարումը կկատարվի մինչև դեկտեմբերի 25-ը՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն կիրականացվի երկկողմ հաստատված ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Անկանխիկ վճարումների դեպքում պատվիրատուն վճարման հանձնարարագրի պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է կատարողին:

Վճարել հունվար և փետրվար ամիսների ամսական սպասարկման վճարը մինչև մարտի 31-ը»:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից,

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժան մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ** | **«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Արմենակյան 129 | Երևան, Զաքիյան 10 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011064087 | ՀՀ 1570003302070100 |
| ՀՎՀՀ 01573524 | ՀՎՀՀ 02562123 |
| տնօրենի ժ/պ | գլխավոր տնօրեն |
| **Գ.Ներսիսյան** | **Ս. Ստեփանյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան 03 դեկտեմբերի 2018թ.

ՀՀ բնապահպանական նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Մ. Գալստյանի, մի կողմից և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող գլխավոր տնօրենի պ/կ՝ Է. Օհանյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), ղեկավարվելով սեփական կամքի ազատ արտահայտմամբ և Կողմերի միջև 17.02.2017 թ. կնքված «Պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքի սպասարկման» թիվ 04-17 պայմանագրի 5.3. կետի պահանջներով, կազմեցին սույն համաձայնությունն (այսուհետ՝ «Համաձայնություն») հետևյալի մասին.

***1.*** Կողմերի միջև 17.02.2017 թ. կնքված «Պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքի սպասարկման» թիվ 04-17 պայմանագրում կատարվում է հետևյալ փոփոխությունը՝ 10.-րդ կետում «N 1570003302070100 «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում» թիվն ու բառերը փոխարինվում են «N 900018002981 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչության Երևանի թիվ 1 բաժանմունքում» թվերով ու բառերով:

***2.*** Կողմերի միջև 17.02.2017 թ. կնքված «Պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքի սպասարկման» թիվ 04-17 պայմանագրի այլ դրույթները թողնվում են անփոփոխ:

***3.*** Համաձայնությունը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

***4.*** Տեղեկություններ Կողմերի մասին.

Պատվիրատու՝ ՀՀ բնապահպանական նախարարությանը «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 273.180.05667, գրանցման ամսաթիվը 04.02.2011 թ., գրանցման վկայականի N 002773, տրված 04.02.2011 թ., ՀՎՀՀ 01573524, իրավաբանական անձի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 129 շենք, գործունեության իրականացման վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 129 շենք, հաշվարկային հաշիվ N 900011064087, ՖՆ աշխատակազնի Գործառնական վարչությունում, հեռախոս՝ (010) 65-16-31, (010) 65-16-41:

Կատարող՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 222.210.00408, գրանցման ամսաթիվը՝ 08.10.2004 թ., գրանցման վկայականի N 03Ա 085321, տրված 23.06.2009 թ., ՀՎՀՀ՝ 02562123, իրավաբանական հասցեն՝ 0015, ք. Երևան, Զաքիյան փողոց 10, հաշվարկային հաշիվ N 900018002981 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչության Երևանի թիվ 1 բաժանմունքում, հեռախոս՝ 56-14-21:

**Պատվիրատու՝**

Մ. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կատարող՝**

Է. Օհանյան

(ստորագրություն)